


# "THE SEA SCENE ON MY MOTHER'S DAY" BY H. I. PILIKIAN


*Posted on May 28, 2013 by Keghart*



Category: [Opinions](#)




Reviewed by Jirair Tutunjian, Toronto, 27 May 2013

Books with multilingual translations of poetry are not new to Armenians. However, Hovhanness  Pilikian's "[The Sea Scene on My Mother's Day](#)" must be one for the record books. No less than translations into 18 languages of Pilikian's poem—originally written in English--are compiled in the book.

Concept originator and project manager was Artsvi Bakhchinian, an old hand at translating into Armenian. The translations into as diverse languages as Latvian, Quechua, Yoruba, in addition to a number of Middle Eastern and Oriental languages, were done by an international group composed of a music promoter, an economist, a university lecturer, a potter, gallery owner, editor, painter... Keeping up with the international concept of the book, the cover illustration is by Elizabeth Romhild, nee Davidian, who lives in Bangkok.

Reviewed by Jirair Tutunjian, Toronto, 27 May 2013

Books with multilingual translations of poetry are not new to Armenians. However, Hovhanness  Pilikian's "[The Sea Scene on My Mother's Day](#)" must be one for the record books. No less than translations into 18 languages of Pilikian's poem—originally written in English--are compiled in the book.

Concept originator and project manager was Artsvi Bakhchinian, an old hand at translating into Armenian. The translations into as diverse languages as Latvian, Quechua, Yoruba, in addition to a number of Middle Eastern and Oriental languages, were done by an international group composed of a music promoter, an economist, a university lecturer, a potter, gallery owner, editor, painter... Keeping up with the international concept of the book, the cover illustration is by Elizabeth Romhild, nee Davidian, who lives in Bangkok.

Some of the translators include their appreciation of the poem or talk about their methodology. Some have provided their photos. Others have let the translation speak for itself. Bakhchinian explains that the inconsistency reflects Pilikian's belief that books should contain some mysteries... "...I have not harmonized or coordinated everything formally strictly with each other," says Bakhchinian in his introduction.

Picking on Pilikian/Bakhchinian theme, we believe poetry is a mystery. It is meant to be sung and to be heard. Poetry can die when dissected. Thus, we would let the poem speak for itself. Having said that, we would be remiss not to mention the richness of polymath Pilikian's poetic language, the mythical allusions and alliterations, the neologisms, the play on words ("Ho-kiss", "Luce-tania", "Seeworthy"). The poem, dedicated to his dying mother, is a festival of metaphors—the sea coast and the sea are the beginning and end of life, the father of all water was a mother too ..."the nurse burst the shores of his temper Flooding me with furious oceanic anger", "the last bubble of her

universal breath" as her soul departed Golgotha and "titanic Okeanus sank my mother's ship".

The poem is also full of surrealist images. One such evocative line, "A funeral cortege on its way to the seaside" is right out of a Federico Fellini movie. To add to the mystery and the dreamy last minutes of his mother, Pilikian has written the elegy without punctuation. It works.

The poem is a tribute and a farewell to the poet's mother Tefarik. It's a resignation to and rebellion against death. Expressing his indignation to the Grim Reaper/Charon, Pilikian calls Death "God's very own Rapist" as he ends the gut-wrenching eulogy.

Interlaced with the farewell is the indomitable silence of Death. When the poet was young, Tefarik often asked him: "Son, tell me, now! At this very moment, what's in my heart? How would you know it?" At his mother's deathbed, the poet asks his mother the same question. The answer is that of Death's: "I've nothing to say."

\*\*\*\*\*

## Գրական Հազվադեպ Մի Երեվույթ Հակոբ Ծուլիկյան, Ազգ Օրաթերթ, Երևան, 17 Հունիս 2013

(Նույն պոեմը քսան լեզուներով՝ մի հատորում)

Հասարակության մեջ մարդկանց միմյանց հետ հաղորդակցվելու պահանջը բնական երեւույթ է, որն իր հերթին առաջ է բերում նաեւ օտարների՝ այլ մշակույթների հետ շփվելու անհրաժեշտություն, ինչը լեզվական հարստացման եւ մտածելակերպի ընդարձակման կենսական աղբյուր է ծառայում երկու, երեք եւ ավելի ազգությունների ներկայացուցիչների համար:

Յուրաքանչյուր գրող, որեւէ ստեղծագործության հեղինակ երագում է բացի մայրենի լեզվից իր գործը հրատարակված տեսնել նաեւ այլ, օտար լեզուներով: Եվ ինչքան շատ լինեն այդ լեզուները, այնքան մեծ կլինի տվյալ գրողի վաստակի արժեւորումը:

Հազվադեպ է, որ մի ստեղծագործություն թարգմանվի մեկ տասնյակից ավելի լեզուներով եւ հրատարակվի մեկ հատորում: Հիշատակության արժանի են խորհրդային ժամանակներում Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» եւ Հովհաննես Թումանյանի «Հայոց լեռներում» պոեմների թարգմանությունները՝ համապատասխանաբար 1967 եւ 1969 թվականներին («Հայաստան» հրատարակչություն): Առաջինը (կազմող՝ Ա. Նազիկյան, խմբագիր՝ Լ. Միրիջանյան) 13 (հայերեն, ռուսերեն, ուկրաիներեն, վրացերեն, ադրբեջաներեն, չեխերեն, լեհերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, իտալերեն, պարսկերեն եւ իսպաներեն) լեզուներով, իսկ երկրորդը (կազմող եւ խմբագիր՝ Ա. Պողոսյան) 14 (հայերեն, ռուսերեն,

ուկրաիններեն, վրացերեն, արիբեջաներեն, էստոներեն, մոլդավերեն, տաջիկերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, հարավսլավերեն եւ հունարեն) լեզուներով:

Այժմ անգլիաբնակ բազմահմուտ մտավորական, բանաստեղծ, երգահան, լեզվաբան եւ թատերագետ Հովհաննես Փիլիկյանի «Ծովանկար իմ մօր օրուայ մասին» չափազանց գողտրիկ, մելամաղձոտ եւ պատմական խորհրդանշական այլաբանություններով հագեցած պոեմը 20 լեզուներով մեկ գրքում հրատարակելու բացառիկ եւ գնահատելի մտահղացումն է ունեցել «Ազգ»-ի մշտական աշխատակիցներից, տաղանդավոր թարգմանիչ, պրպտող մտավորական եւ մշակութաբան երեւանաբնակ Արծվի Բախչինյանը , որն իրականություն է դարձրել վերջերս իր ծրագիրը՝ նվիրելով հատորը հայ գրքի տպագրության 500-ամյակին:

Պոեմը իր շիջող մոր սևարի մոտ կանգնած որդու հոգեկան տվայտանքների մասին է՝ ի տես այն «տիտանական Ովկիանոսին», որը «ջրասույզ է» անում «մոր նաւը»:

«Արծվի Բախչինյանի այս գիրքը... հպարտության աղբյուր է ինձ համար: ...Ես չէի կարող բազալտից, օբսիդիանից կամ մարմարից ավելի անգին հուշարձան կառուցել... իմ քաղցրիկ ու իմաստուն մայրիկի՝ Թեֆարիկի համար», գրում է իր երախտիքի խոսքում պոեմի անգլերեն բնագրի հեղինակ Հովհաննես Փիլիկյանը: Հրատարակված գրքի 8-10-րդ էջերում «Միեւնույն հարկի տակ» խորագիրը կրող ներածականում ինքը՝ Արծվի Բախչինյանը հետաքրքրական տվյալ է նշում, գրելով, որ 2010-ին իրականացրել է նման մեկ այլ ծրագիր՝ հրատարակելով ճանաչված գրող Էլրա Գրինի «Ձեռքերը» կարճ պատմվածքի թարգմանությունները 35 լեզուներով:

«Անգլերեն բնագիրը» իր հակիրճ ներկայացման մեջ «Կիպրահայեր» համացանցային հանդեսի խմբագիր Սիմոն Այնեճյանը շատ դիպուկ է բնորոշում ներկա բանաստեղծությունը գրելով՝ «Այն իւրօրինակ կերպով ոգեկոչում է մայրերի օրը անփարատ տխրութեան եւ զգացմունքայնութեան ողբերգական զգացումների մի ամբողջութեամբ, որը, սակայն, ի վերջոյ փոխակերպւում է յաղթական երգի՝ ընդդէմ մահուան, թերեւս վերջին ամենացնցող բառերով, որ երբեւիցէ գրուել են անգլիական պօեզիայի պատմութեան մէջ, եւ որը ես կարող եմ մեջբերել որոշ յուզմունքով. Հնձուոր Մահուան աւանդական միջնադարեան պատկերը դառնում է Աստծոյ պոստմոդեռնիստական կեանքի հնձող-բռնաբարող, մի ապշեցուցիչ փիլիսոփայական բացայայտում, որն ընթերցողը չի կարող մոռանալ»:

Այնուհետեւ բանաստեղծության անգլերեն բնագրին հետեւում են թարգմանությունները հետեւյալ լեզուներով՝ արաբերեն (թարգմանիչ՝ հալեպահայ Հարութ Վարդանյան (Հարվարդ), հայերեն (թարգմանիչ՝ Արծվի Բախչինյան), չինարեն (թարգմանիչ՝ Լի Բոն Ուեն), դանիերեն (թարգմանիչ՝ ծնունդով դանիացի Գերդա Դավիդյան), պարսկերեն (թարգմանիչ՝ Խաչիկ Խաչեր, իրանահայ գրող, բանաստեղծ եւ թարգմանիչ),

Ֆրանսերեն (թարգմանիչ՝ Երեւանի պետական համալսարանի ռոմանո-գերմանական ֆակուլտետի նախկին ուսանողուհի Լուսինե Շուքուրյան), գերմաներեն (թարգմանիչ՝ Լորնթի Յունգ, մասնագիտությամբ տնտեսագետ), իտալերեն (թարգմանիչ՝ ջենովաբնակ Սերենա Ֆերրանդո, դասական լեզուների մասնագետ), ճապոներեն (թարգմանիչներ՝ Դաիսակու Վատանաբե: Հայերեն է ուսանել Ասիական եւ Աֆրիկյան լեզուների եւ մշակույթների Տոկիոյի ինստիտուտում: 2011-ից ապրում է Երեւանում: Աշխատում է դոկտորականի վրա եւ Հարունա Հիրոհատա՝ Տոկիոյի համալսարանից), լատիշերեն (թարգմանիչ՝ Վալդա Սալմիս: Ավարտել է Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի Հայկական ուսումնասիրությունների բաժինը: Լատիշերեն է թարգմանել Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգությանը»), մակեդոներեն (թարգմանիչ՝ Արմինե Փիլոյան-Վրտեսկա: Ավարտել է Երեւանի պետհամալսարանի Ռոմանա-գերմանական ֆակուլտետի անգլիական բաժինը: Ապրում է Սկոպիեում (Մակեդոնիա) եւ դասավանդում է հայերեն տեղի հայկական շաբաթօրյա վարժարանում), լեհերեն (թարգմանիչ՝ Օլգա Սիենկո, նկարչուհի), պորտուգալերեն (թարգմանիչ՝ Նադիա Կերեչուկ: Ուկրաինացի է, ծնված Բրազիլիայում, լեզվաբան), կեչուա (երկու տարբերակով, թարգմանիչներ՝ Նոնատո Բուֆինո Չուկուի Մամանի Վալեր եւ Կարմեն Գլադիս Ալոսիլա Մորալես, ռումիներեն (թարգմանիչներ՝ Հասմիկ Մարիամ Դանիելյան), ռուսերեն (թարգմանիչ՝ Արծվի Բախչինյան), իսպաներեն (թարգմանիչ՝ Ջեսիկա Լուոնգ, թուրքերեն (թարգմանիչ՝ Խորեն Մարտիրոսյան), յորուբա (թարգմանիչ՝ Բրիջետ Ալաբի: Նիգերիայի բնակչության մեծամասնությունը կազմող յորուբա ցեղից: Նրա թարգմանությունը առաջինն է դեպի աֆրիկյան լեզուներ կատարված որեւէ հայի ստեղծագործության):

Հատորի վերջում պոեմի բնագրի հեղինակ Հովհաննես Փիլիկյանի կենսագրական տվյալներն են տրված, որտեղից տեղեկանում ենք, որ նա Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի արքայական մարդաբանական ինստիտուտի եւ Լոնդոնի քաղաքային գրական ինստիտուտի ակադեմիական վարչության անդամ է: Բրիտանական հանրագիտարանի համար հոդված է գրել մեծագույն թատերական գործիչ Մաքս Ռայնհարդտի մասին: Նա հոդվածներ է գրել նաեւ «Drama» (Դրամա) եւ «Theatre Quarterly» («Թատրոն եռամսյա») հանդեսների համար: Մոտ 40 պիես է բեմադրել, որոնցում դերեր են ստանձնել Դայանա Դորսը, Դերեք Ջակոբին, Քիթ Միտչելը, Ալֆրեդ Մարքսը, Ռիչարդ Գրինը, Սառա Բադելը եւ ուրիշներ: Նշանակալի են հատկապես նրա շեքսպիրյան պիեսների բեմադրությունները: Տիրապետում է 11 լեզուների, որոնց թվում են գրաբարը, լատիներենը, եբրայերենը եւ չինարենը: Արժանացել է բազմաթիվ պարգևների եւ մրցանակների: Նրա անունը գրանցված է «Who's Who» կենսագրական բառարանում:

Հասկանալի է, որ նման վիթխարի գործ, այսինքն մի գրական ստեղծագործության հրատարակությունը տարբեր լեզուներով, իրականացնելը հեշտ չի եղել Բախչինյանի համար, բայց նա ինքն է խոստովանում գրքի էջերում, որ դա միաժամանակ

«հրապուրիչ է եղել», քանի որ նման ժողովածուները իսկական պարզել են բոլոր նրանց համար, ովքեր «ըմբռնվում են տարբեր լեզուների մեղեդայնություններն ու այբուբենական տառատեսակների զարմանազան գրելաձևերը»:

Մեզ մնում է «վարձքդ կատար» ասել Արծվի Բախչինյանին եւ նրան մաղթել ստեղծագործական հետագա մտահղացումներ:

Հարկ է նաեւ գնահատանքի խոսքեր ուղղել գրքի շապիկը ձեւավորող նկարչուհի Էլիզաբեթ Ռոմիլիդին (Դավիդյան), կես հայ, կես դանիացի, որն ապրում է Թայլանդում, եւ բոլոր թարգմանիչներին, որոնք սիրահոժար հանձն են առել իրենց լուման ներդնել այս գործում: Ճիշտ են վարվել պոեմի հեղինակն ու հրատարակիչը, որ նրանց հակիրճ կենսագրական տվյալներն են ընդգրկել հատորում:

